ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ II, ՓՈՒԼ 3 – ՄԱՍՀԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 2 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Խաչատրյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի Ա. Դիլանյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2020 թվականի մայիսի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 – մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2020 թվականի հունիսի 11-ի N 932-Ա որոշմամբ 2020 թվականի մայիսի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 – մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի հունիսի 17-ին:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունիսի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 - մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի մայիսի 12-ին՝ Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի (KFW) միջև 2013 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված (ուժի մեջ է մտել 21.06.2014 թ.) «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3» վարկային համաձայնագրով (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) նախատեսված ֆինանսական միջոցների մասհանման ժամանակահատվածի երկարաձգման նպատակով:

Վարկային համաձայնագրով (փոփոխված 2018 թ. հունիսի 20-ին) Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3-ի համար հատկացվում է 30.000.000 եվրո գումարի չափով արտոնյալ վարկ: Վարկային համաձայնագիրը ստորագրելու համար նախադրյալ է հանդիսացել 2014 թվականի ապրիլի 11-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2014 թվականի հունիսի 21-ին Ազգային Ժողովի ԱԺՈ-122-Ն որոշմամբ (ՍԴՈ-1155)):

Նամակ-համաձայնագիրը ներպետական ընթացակարգերին համապատասխան վավերացնելու համար նույն համաձայնագրով սահմանված է վերջնաժամկետ՝ մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը, որպես՝ դրանով նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ Վերականգնման վարկերի բանկի համաձայնության համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը (կետ (i):

Սահմանադրական դատարանը սույն Նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցը որոշելիս հաշվի է առել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության) և Վերականգնման վարկերի բանկի միջև փոխադարձ համաձայնությամբ (Գործում առկա է Նամակ-համաձայնագրի կողմերի համապատասխան նամակագրությունը) այդ վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը:

2. Նամակ-համաձայնագրով փոփոխություն է կատարվում Վարկային համաձայնագրի 3.2 հոդվածում, ըստ որի՝ նույն համաձայնագրով նախատեսված գումարի մասհանման վերջնաժամկետ է սահմանվում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ի փոխարեն, պայմանով, եթե Հայաստանի Հանրապետությունը կրի երկարաձգման հետևանքով Վերականգնման վարկերի բանկի կողմից փոխհատուցման ենթակա ծախսերը («Երկարաձգման վերջնական վճար»), որը Հայաստանի Հանրապետության համար կազմում է 960.000 եվրո:

Սահմանադրական դատարանը կարևորում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2020 թվականի մայիսի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 – մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴՈ-1548